ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(22 դեկտեմբերի, 2013 թ.)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի.
եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի»
(Ղուկ. ԺԸ. 14):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Դեպի Աստվածհայտնության մեծ տոնը պատրաստության այս հիսնակաց շրջանում՝ Հարության, կյանքի նորոգության խորհրդով լեցուն այս պայծառ կիրակի օրը Տերը մեզ ուսուցանում է մի առակ՝ պատմելով, թե ինչպես երկու անձ՝ փարիսեցին ու մաքսավորը Տաճար են գնում աղոթելու: Փարիսեցին հրեա կրոնաքաղաքական համայնքի անդամ էր, օրենքին հնազանդվող եւ այն կատարող, օրենքի տառը ճանաչող, իսկ մաքսավորը հրեական համայնքի կողմից համարվում էր հափշտակող, հարկեր հավաքող, գողացող, մեղսագործ մի անձնավորություն:

Աղոթքի ժամանակ փարիսեցին ինքնագովեստով հայացքը դեպի Տաճարի բարձրունքն է հառում և հպարտությամբ ասում. «Ինչ լավ է, Տե՛ր, որ ես հափշտակող և գողացող չեմ այս մաքսավորի նման, այլ Քո օրենքի տառը կատարելով՝ մշտապես աղոթքի և պահքի մեջ եմ, իմ տասանորդն եմ տալիս Տաճարին»: Իսկ մաքսավորը՝ Տաճարի աննկատ անկյունում ծնկած, չհամարձակվելով անգամ հայացքը բարձրացնել, իր կուրծքն էր ծեծում եւ ասում. «Աստվա՛ծ, քավի՛ր մեղավորիս մեղքերը»:

Մեր Տերը, սիրելինե՛ր, այս առակը պատմելով, բացատրում է. «Ով իր անձը փորձի բարձրացնել՝ կխոնարհվի, և ով իր անձը խոնարհեցնի՝ կբարձրանա»: Այս առակը, անշուշտ, իրական դեպք չէ, այլ փոխաբերական օրինակ, որով Տերը փորձում է ուսուցանել՝ մաքսավորը, որն իր մեղսավոր ընթացքի համար զղջացել, մեղքերը գիտակցել, ապաշխարել և եկել էր Տիրոջ առջև կանգնելու, ձգտում էր դեպի Աստված: Իսկ փարիսեցին, ընդհակառակը, հպարտանալով, ամբարտավան կեցվածքով, հեռանում էր Աստծուց, որովհետև պարծենում էր այն ամենով, ինչ արել էր իր կյանքում:

Մեր կյանքում, սիրելինե՛ր, անշուշտ, խորհրդաբար բազմաթիվ են փարիսեցիների և մաքսավորների օրինակները: Ոչ ոք չգիտի, թե մարդու ներաշխարհում ինչ է

կատարվում, նա ինչպես է հավատում, քայլում Գողգոթայի ճանապարհով, ինչպես է ձգտում դեպի հոգևոր անսահմանություն և այդ ձգտման ճանապարհին հանդիպում Տիրոջը: Այս առակով Տերը ուսուցանում է, որ չդատենք դիմացինին, քանզի մեր կարծիքը դիմացինի մասին արդյունքն է միայն այն գործերի, որ կարող ենք տեսնել, այնպես, ինչպես փարիսեցին վարվեց մաքսավորի հետ, քանզի չգիտեր, թե նրա հոգում ինչ էր կատարվում, որովհետև մեր մարդկային չափանիշը շատ տարբեր է, ուստի փորձենք մենք այդ կերպ չվարվել ուրիշների հետ:

Չգիտենք՝ այս աշխարհի իմաստունները արդյոք իմաստուն կլինե՞ն Տիրոջ առջև, որովհետև Տերը մեզ այլ բան է ասում, ուսուցանում, որ այս աշխարհի հիմարները Աստծո իմաստունները կլինեն. նրանք, որոնք այս աշխարհի գիտակցությամբ որակվում են հիմարներ և ոչ թե Աստծո հավատքի մեջ իրական, բարոյական արժեքներով ապրող անձինք: Ամեն մարդ չէ, որ կարող է իր կյանքում գիտակցաբար քրիստոնեական ճշմարիտ բարոյականության և արժեքների մեջ ապրել, իր ընթացքը դեպի Աստված ճշմարիտ ճանապարհով անցնել:

Տերն այս առակով սովորեցնում է չդատել և հորդորում, որ ինքներս մեզ դատաստանի ենթարկենք, տեսնենք մեր աչքի մեջ եղած շյուղը, գերանը՝ չնկատելով մեր քրոջ և եղբոր աչքի շյուղը:

Այս կիրակիի պատգամը, որը Տերը մեզ ուսուցանում է, շատ կարեւոր է. մեր առօրյա կյանքում, շատ հաճախ հնարավոր է նաեւ եկեղեցու ներսում, աշխատավայրում տեսնենք մաքսավորի կերպար, որը մեր բնութագրմամբ լինի չափազանց մեղավոր, սխալ ընթացքի մեջ եղող, համառ անձնավորություն... Արդյոք նրան օգնության ձեռք կմեկնե՞նք, թե կասենք՝ մենք լավն ենք, Տաճար ենք գնում, արարողության մասնակցում, պահքի,աղոթքի մեջ ենք միշտ, եւ Աստված ներկա է մեր կյանքում, իսկ երբ օրենքի այդ ոգին մեր կյանքից բացակայի, այդ օրենքի և Աստծո պատգամի խորհուրդը մեր կյանքից անհետանա:

Եկե՛ք, ուրեմն, ոչ թե դատենք այն նորադարձ քրիստոնյաներին, որոնք Եկեղեցի են գալիս իրենց առաջին քայլերը կատարելու Աստծո հայտնության, Նրան միավորվելու եւ գտնելու ճանապարհին, այլ լինենք Տիրոջ շնորհի հայտնության այն անոթները, որ համարձակությամբ մոտենանք Նրա այդ շնորհին եւ ողորմություն հայցենք: Մեր հայացքը մեր ներքին անձին թող մշտապես խոնարհ մնա, իսկ մեր հոգու հայացքը թող միշտ բարձրանա դեպի Աստծո անսահմանությունները, որտեղից մեզ ողորմություն պետք է իջնի: Եկե՛ք ապրենք մշտապես կրկնելով մաքսավորի աղոթքը՝ «Աստուա՛ծ, քավեա՛ զիս զմեղաւորս», և աղոթենք նաև մեր քույրերի եւ եղբայրների համար, որ, թերևս մեր բնութագրմամբ, խոտոր ընթացքի մեջ են, բայց խնդրենք, որ Աստված հայտնվի, Իր իմաստության լույսով եւ շնորհներով զորացնի, հայտնվի այնպես, ինչպես Մովսես մարգարեին, Պողոսին եւ մյուս առաքյալներին հայտնվեց, եւ մենք այդ իմաստությունը ունենանք՝ տեսնելու և գիտակցելու Աստծո շնորհը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն: